ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեր Համալսարանը հնի և նորի համալիր գաղափարակիրն է

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԸ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ՃՇՀԱՀ դիզայնի ֆակուլտետի դասախոսական կազմից շատերի համար այս գարնանամուտը նշանավորվեց «Կովկաս շինարարություն և վերանորագում EXPO-2019» 16-րդ միջազգային ցուցահանդեսում դիզայնի մասնագիտական սեմինարի կազմակերպմամբ և ակտիվ մասնակցությամբ:

Մասնագիտական տարբեր հարցերի շուրջ իրենց պրոֆեսիոնալ խոսքը և ստեղծած ֆիլմերը ցուցահանդեսի մասնակիցներին և այցելուներին ներկայացրեցին Դիզայնի ֆակուլտետի 9 դասախոսներ: Անհրաժեշտ է նշել, որ, հերթական անգամ, Հայաստանի դիզայներների միության հովանավորությամբ՝ միջազգային ցուցա-հանդեսի մասնակից էին դարձել ֆակուլտետի դիզայնի, ինտերիերի և էքստերիերի ամբիոնների շրջանա-վարտներն՝ իրենց ավարտական նախագծային աշխատանքներով:



Այցելուների մոտ դիզայն մասնագիտության նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացրեցին, հատկապես, տարբեր նյութերով պատրաստված մանրակերտային աշխատանքները, որը շատերի կողմից հիմք հանդիսացավ հետաքրքրվելու մեր համալսարանում դիզայնի մասնագիտությամբ կրթություն ստանալու հնարավորություններ մասին:

Նշենք նաև, որ ցուցահանդեսի բոլոր մասնակիցները կպարգևատրվեն անհատական դիպլոմներով:

ՃՇՀԱՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ԻՏԱԼԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՕՐԵՐԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում Իտալիայի դիզայնի օրերի մեկնարկը տրվեց մեծ հանդիսությամբ և պատվավոր հյուրերով: Մարտի 22-ին, միջոցառման բացման արարողությանը ներկա էին ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Վինչենցո Դել Մոնակոն, ՀՀ ԿԳ փոխնախարար Գրիշա Թամրազյանը, Քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ղուլարյանը, Իտալիայից ժամանած ճարտարապետների պատվիրակությունը, ՀՀ Ճարտարապետների պալատի նախագահ Մկրտիչ Մինասյանը, ՃՇՀԱՀ պրոֆեսորադասախոսական կազմը, ճարտարապետներ, դիզայներներ և ուսանողներ:

Ողջունելով ներկաներին՝ ՃՇՀԱՀ ռեկտոր Գագիկ Գալստյանը նախ շնորհակալություն հայտնեց ՀՀ-ում Իտալիայի դեսպանությանը՝ Իտալիայի դիզայնի օրերն արդեն 3-րդ անգամ մեր համալսարանում նշելու և տարիների շարունակական արդյունավետ կապերի համար. «Մենք համագործակցում ենք իտալական մի շարք բարձրակարգ արվեստի, ճարտարապետական դպրոցների հետ, իրականացնում ենք կրթական ու մշակութային բազմապիսի ծրագրեր և համատեղ նախագծեր»,-նշեց ռեկտորը՝ հավելելով, որ մեծագույն պատիվ և հաճույք է հյուրընկալել իտալացի անվանի ճարտարապետներին՝ հնարավորություն տալով ուսանողներին ծանոթանալ ժամանակակից իտալական դիզայնի ու ճարտարապետության նորարարություններին:

Դեսպան Վինչենցո Դել Մոնակոն խորհրդանշական ու անչափ կարևոր համարեց դիզայնի օրերը, հատկապես, մեր համալսարանում, դեսպանի խոսքով՝ հայկական ճարտարապետության ոլորտի տաճարում անցկացնելու հանգամանքը: Խոսելով ժամանակակից ճարտարապետության գործառույթների մասին՝ դեսպանը նշեց, որ այն պետք է ուղղված լինի կյանքի վերարտադրողականությանը և համապատասխանի շրջակա միջավայրին: Այս համատեքստում նա կարևորեց դիզայնի օրերի շրջանակում իտալացի ճարտարապետների՝ «Խելացի քաղաք» խորագրով նախագծերի ցուցադրությունն ու նախատեսված դասախոսությունները:

Միջոցառման կարևորությունը՝ հայ-իտալական մշակութային կապերն առավել ամրապնդելու տեսանկյունից, ընդգծեցին նաև Քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ղուլարյանը և ՀՀ ԿԳ փոխնախարար Գրիշա Թամրազյանը: Փոխնախարարը նշեց, որ սա լրացուցիչ հնարավորություն է ուսանողների համար՝ ծանոթանալու ճարտարապետության և դիզայնի ոլորտում համաշխարհային այինձեռքբերումներին ու նորարարություններին:

«Նախադեպը ունենք, երբ հայ և իտալացի ճարտարապետներ՝ ուսանողների հետ համատեղ, վերականգնել ենհին հայկական եկեղեցիներ»,-նշեց Արմեն Ղուլարյանը:

Իտալացի ճարտարապետներն էլ խոսեցին Հայաստանից ստացած իրենց աննկար ագրելիտպավորությունների, հեղինակած նախագծերի և կայանալիք դասախոսությունների թեմաների շուրջ:

«*ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆԵՆՔ ՈՒ ԽՈՐԱՑՆԵՆՔ ԴԱՐԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ*». ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԷՐ ԴԵՍՊԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՊԻՐԿԻՆԸ

Մարտի 27-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էր ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը և «*Ռուսհամագործակցություն*» դաշնային գործակալության ներկայացուցիչները:

Այցը ճանաչողական էր, ինչպես նաև՝ հայ-ռուսական դարավոր բարեկամությունն ու համագործակցությունը հաստատելու և ամրապնդելու հեռանկար: Ռեկտոր Գագիկ Գալստյանի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուղեկցությամբ՝ դեսպան Կոպիրկինը նախ շրջեց համալսարանում, ծանոթացավ արվեստանոցներին ու լաբորատորիաներին, հետևեց դասապրոցեսներին, ապա՝ հանդիպեց նաև ուսանողներին:

Ողջունելով հյուրին՝ ռեկտոր Գալստյանը հակիրճ ներկայացրեց Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի անցած ուղին,

գործունեությունը, ռուսաստանյան առաջատար բուհերի և ընկերությունների հետ սերտ համագործակցությունը, համատեղ իրականացված նախագծերն ու մեր ուսանողների ձեռքբերումները. «Մեր համալսարանը համագործակցության բազմաթիվ պայմանագրեր ունի Կազանի, Տյումենի, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Ռոստովի, Աստրախանի ճարտարապետական և շինարարական համալսարանների հետ: Գրեթե յուրաքանչյուր տարի Մոսկվայի Ճարտարապետների միության կողմից հայտարարված մրցույթներից մեր ուսանողները վերադառնում են պատվոգրերի, հատուկ մրցանակների և գրան պրիների արժանացած»,-նշեց Գ. Գալստյանը:

Ռեկտորն առանձնակի կարևորությամբ ընդգծեց սեպտեմբերին Երևանում կայանալիք ճարտարապետական համալսարանների «Մեկ գոտի և մեկ ուղի» կոնսորցիումի համաժողովի, ինչպես նաև սեպտեմբերի 26-27-ին նախատեսված ԱՊՀ երկրների և Ռուսաստանի Դաշնության շինարարական բուհերի ասոցիացիայի հանրագումարի անցկացման մասին, որին կմասնակցեն 30 ճարտարապետաշինարարական բուհերի ռեկտորներ:

Բարձր գնահատելով բազմադարյա փոխգործակցությունն ու եղբայրական հարաբերությունները՝ դեսպան Կոպիրկինն այն կարծիքին է, որ այդ կապերն անդադար խորացնելու և զարգացնելու կարիք ունեն: Այս համատեքստում՝ դեսպանը կարևոր է համարում, հատկապես, երիտասարդների մասնակցությունը. «Այս համալսարանը, կարծես, մարմնացումն է 2 ստեղծագործ ժողովուրդների համագործակցության, իսկ ուսանողների ակտիվ շփումը կարող է այդ հարաբերություններն առավել բարձր մակարդակի հասցնել»,-նշեց դեսպանը՝ խոսքն ուղղելով ուսանողներին: Վերջիններն էլ, իրենց հերթին, խոսեցին ռուս ուսանողների, գործընկերների մասին իրենց ջերմ

վերաբերմունքի, համալսարանում ուսանողական զբաղվածության և անցուդարձի մասին: Հանդիպման ավարտին՝ ռեկտոր Գագիկ Գալստյանը, համալսարանի կողմից, դեսպանին գրքեր նվիրեց:

ՏՐՎԵՑԻՆ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻՑ ԱՆՎՃԱՐ ԵՐԹԵՎԵԿԵԼՈՒ ՔԱՐՏԵՐԸ

«Արարարատբանկ» ԲԲԸ-ի, Կ. Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն ՓԲԸ-ի և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև կնքված եռակողմ հուշագրի շրջանակում՝ տրվեց «Անվճար երթևեկություն՝ ՃՇՀԱՀ ուսանողներին» ծրագրի շարունակական մեկնարկը, որով համալսարանի սոցիալապես անապահով և հասարակական ակտիվ ուսանողները մետրոպոլիտենից կօգտվեն անվճար: Արդեն իսկ գործող ծրագրում ներգրավվեց մոտ 44 ուսանող: Ուսանողական խորհրդի քարտուղար Տաթև Բարխոյանը ուսանողներին հանձնեց մետրոպոլիտենի քարտերը, շնորհավորեց նրանց և մաղթեց բարի երթ:

Նշենք, որ Ուսանողական խորհրդի այս ծրագիրը, 2015 թ-ին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպվող «Հայկյան» մրցանակաբաշխությանը, «Լավագույն ինքնատիպ նախագիծ» անվանակարգում ճանաչվել է հաղթող:

ԼԱ ԿՈՐՈՒՆԻԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆՔ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Մարտի 10-17-ը Իսպանիայի Լա Կորունիայի համալսարանում էին գտնվում Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչի ժ/պ, դոցենտ Էմմա Հարությունյանը, նույն ամբիոնի ասիստենտ, ՃՇՀԱՀ միջազգային և միջբուհական համագործակցության բաժնի պետ՝ Արև Սամուելյանը և մի խումբ ուսանողներ: Մեր պատվիրակության իսպանական այցի նպատակը միջազգային Յակոբուս + Էրազմուս+ 2019 թ-ի ուսանողական համատեղ մրցույթի մեկնարկային աշխատանքներին մասնակցությունն էր, որին ներկա էին դասախոսներ և ուսանողներ Հայաստանից, Գերմանիայից, Իսպանիայից ու Ֆրանսիայից: Աշխատանքային օրերի

ընթացքում՝ 11 խմբերի բաժանված ուսանողները ներկայացրեցին իրենց առաջարկները՝ համապատասխան գծագրային մասերով և աշխատանքային մակետներով:

Այցը Լա Կորունիայի համալսարան արդյունավետ է եղել նաև հանդիպումների և հետագա անելիքների վերաբերյալ համատեղ քննարկումների տեսանկյունից: Մեր պատվիրակության անդամները մասնակցել են համալսարանում աշխատող կին ճարտարապետների գիտաժողովին, որոնք ներկայացրել են տարբեր ժամանակաշրջաններում Իսպանիայի ճարտարապետության մեջ զգալի ավանդ ունեցած կին ճարտարապետների ստեղծագործությունները, ինչպես նաև հանդիպում ունեցել համալսարանի ուսանողության և գիտական տարեգրքի հրատակչական կազմի հետ:

Ի դեպ, հեղինակավոր ՍԿՈՊՈՒՍ-ում գրախոսվող տարեգրքի աշխատակազմի կողմից առաջարկվել է յուրաքանչյուր տարի մեր համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմից ընդունել և ժողովածուում տպագրել մինչև 6 գիտական հոդված:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ապրիլյան քառօրյա պատերազմը խլեց շատ երիտասարդների կյանք, խլեց տասնյակ ծնողների ժպիտներ: Այս տարի նույնպես ՃՇՀԱՀ-ի Ուսանողական խորհուրդը կազմակերպել էր մոմավառությամբ քայլերթ դեպի Եռաբլուր: Քայլերթ՝ հպարտության, քայլերթ՝ երախտիքի ու խոնարհումի:

Ապրիլի 3-ին, երթը մեկնարկեց զինվորական պանթեոնի դիմացից՝ ՃՇՀԱՀ ռեկտոր Գագիկ Գալստյանի, Ուսանողական խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանի և Բուհերի և երիտասարդության հոգևոր առաջնորդ Գեղամ սարկավագ Ավետիսյանի գլխավորությամբ:

«Այստեղ ենք՝ մեր հոգին ու սիրտը խոնարհեցնելու մեր նահատակ եղբայրների առաջ». Գեղամ սարկավագի առաջնորդությամբ՝ «Եռաբլուր» զինվորական պանթեոնում ուսանողներն իրենց աղոթքը հղեցին առ Աստված՝ ի հիշատակ բոլոր զոհված տղաների: Երթի մասնակիցները շարժվեցին դեպի Քառօրյա պատերազմի անմահ հերոսների շիրիմները և խոնարհեցին ծաղիկներ:

Փա՛ռք մեր հերոսներին: Շնորհակալ ենք տղերք…

ԴԻԼԻՋԱՆԻ UWC ԴՊՐՈՑՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆՔ ԱՐՏ ՖԵՍՏԻՎԱԼԻ

Դիզայն ֆակուլտետի ուսանողական խորհուրդը մասնակցեց Դիլիջանի UWC դպրոցի կազմակերպած Արտ ֆեստիվալին: Հիկարի կենտրոնի բացմանը պատրաստել են Օրիգամի, որը ամենամյա միջոցառում է՝ քաղցկեղով հիվանդ երեխաների օգնության համար, և դրանք ուղարկել Ճապոնիա:

Այնուհետև ներկա են գտնվել դպրոցի երեխաների կողմից կազմակերպված ցուցահանդեսին, մասնակցել Դրինք-Դրոու-ին՝ կոմիքսներ՝ Բադաբադայի հիմադիր Շամիրամի կողմից անցկացվող դասընթացին, իսկ երեկոյան՝ համերգային ծրագրի:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ՝ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆ

Ապրիլի 15-ին տեղի ունեցան երջանկահիշատակ Հովհաննես Զանազանյանի անվան միջֆակուլտետային ֆուտբոլային խաղերի կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերը:

Կիսաեզրափակչում Քաղաքային տնտեսություն և էկոլոգիա ֆակուլտետի թիմը՝ 6-5 հաշվով հաղթեց Միջին մասնագիտական կրթության քոլեջի երկրորդ թիմին՝ գրավելով 3-րդ տեղը:

Առաջին և երկրորդ տեղերի համար մրցում էին Կառավարման և տեխնոլոգիայի և ՃՇՀԱՀ աշխատակազմի թիմերը: Երկու թիմերն էլ հանդես եկան ուժեղ կազմով և ցուցաբերեցին դիտարժան խաղ, որի արդյունքում Կառավարման և տեխնոլոգիա

ֆակուլտետի թիմը՝ ավարտելով խաղը 6-5 հաշվով, գրանցեց հաղթանակ: Ուսանողական խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը հաղթանակած թիմերին պարգևատրեց մեդալներով, պատվոգրերով, իսկ առաջին պատվավոր հորիզոնականը զբաղեցրած Կառավարման և տեխնոլոգիա ֆակուլտետի թիմին՝ ֆուտբոլային գավաթով: Ֆուտբոլային առաջնության լավագույն ռմբարկու ճանաչվեց Սամվել Գրիգորյանը, որը ստացավ սպորտային պայուսակ:

Սրտանց շնորհավորում ենք հաղթող թիմին՝ չեմպիոն դառնալու առթիվ:

«ՍՏՈՐԱԿԵՏ» ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԱՅՑԸ՝ ՀԱՐԱԶԱՏ ԿՐԹՕՁԱԽ

Ապրիլի 16-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էր հյուրընկալվել «Ստորակետ» ճարտարապետական արվեստանոցի համահիմնադիր և տնօրեն Մերուժան Մինասյանը: Լինելով մեր համալսարանի շրջանավարտը՝ այսօր էլ նա փորձում է պահել կապը հարազատ բուհի և նոր սերնդի ճարտարապետների հետ:

Այդ հանգամանքից զատ, Մերուժան Մինասյանն այցելել էր՝ մեր համալսարանին Սիբիլ Կրամերի (*Sibylle Kramer*) «BUILDING TO EDUCATE: SCHOOL ARCHITECTURE & DESIGN» աշխատությունը նվիրելու նպատակով: Գիրքը պատմում է աշխարհի

լավագույն ճարտարապետական ու դիզայներական լուծումներով դպրոցների մասին, որոնց շարքում է նաև հայաստանյան «*Այբ*» *դպրոցը:*

Գրքում հեղինակը մեջբերելով շվեդական հայտնի ասացվածքը՝ «Երեխան ունի 3 ուսուցիչ. 1-ը՝ մյուս երեխաներն են, 2-րդը՝ ուսուցիչը և 3-րդը՝ դասասենյակը», կարևորել է այն միջավայրը, որտեղ սովորում է երեխան: Ըստ հեղինակի՝ որքան ճկուն և բազմաֆունկցիոնալ է կրթական շինությունը, այնքան արդյունավետ է ուսուցումը, աշակերտի ինքնադրսևորումն ու մյուսների հետ շփումը:

ԵՌԱԿՈՂՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՆ ԱՄՓՈՓՎԵՑ ԳՐԱՆ ՊՐԻՈՎ

Ապրիլի 15-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում մեկնարկած եռակողմ աշխատանքային շաբաթն ամփոփվեց: Ինչպես արդեն նշել էինք, մեր, Ֆրանսիայի Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի և Իսպանիայի Կորունիայի համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետների ուսանողներին ու դասախոսներին համախմբել էր հայկական ռազմական ժառանգությունը, որը վերաարժևորելու և վերափոխելու նոր լուծումներ առաջարկելու նպատակով նրանք, 5 խմբի բաժանված, աշխատանքային օրերն անկցացրեցին Երևանյան բերդի տարածքում:

Մեր, Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի և Կորունիայի համալսարանի ճարտարապետներից կազմված ժյուրիի դատին հանձնված 5 նախագծերից մեկն արժանացավ Գրան պրիի, մյուսը՝ խրախուսական մրցանակի, իսկ աշխատանքային շաբաթվա բոլոր մասնակիցները՝ հավաստագրերի:

Գրան պրիի արժանացած 1-ին խմբի անդամներ Ռապինա Լորինը, Կորտալս Ֆլորինը, Պոսե Նունես Ադրիանը, Մելիքսեթյան Ռուզաննան և Յոլյան Արփինեն իրենց նախագծում Երևանյան բերդի տարածքը վերածել էին համալսարանական կոմպուսի՝ ուսումնական շենքերով, հանրակացարանով, բնակելի շենքերով և դեպի Հրազդանի կիրճ ձգվող կամրջով:

ԵՌԱԿՈՂՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՆ ԱՄՓՈՓՎԵՑ ԳՐԱՆ ՊՐԻՈՎ

Ապրիլի 15-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում մեկնարկած եռակողմ աշխատանքային շաբաթն ամփոփվեց: Ինչպես արդեն նշել էինք, մեր, Ֆրանսիայի Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն

ճարտարապետական դպրոցի և Իսպանիայի Կորունիայի համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետների ուսանողներին ու դասախոսներին համախմբել էր հայկական ռազմական ժառանգությունը, որը վերաարժևորելու և վերափոխելու նոր լուծումներ առաջարկելու նպատակով նրանք, 5 խմբի բաժանված, աշխատանքային օրերն անկցացրեցին Երևանյան բերդի տարածքում:

Մեր, Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի և Կորունիայի համալսարանի ճարտարապետներից կազմված ժյուրիի դատին հանձնված 5 նախագծերից մեկն արժանացավ Գրան պրիի, մյուսը՝ խրախուսական մրցանակի, իսկ աշխատանքային շաբաթվա բոլոր մասնակիցները՝ հավաստագրերի:

Գրան պրիի արժանացած 1-ին խմբի անդամներ Ռապինա Լորինը, Կորտալս Ֆլորինը, Պոսե Նունես Ադրիանը, Մելիքսեթյան Ռուզաննան և Յոլյան Արփինեն իրենց նախագծում Երևանյան բերդի տարածքը վերածել էին համալսարանական կոմպուսի՝ ուսումնական շենքերով, հանրակացարանով, բնակելի շենքերով և դեպի Հրազդանի կիրճ ձգվող կամրջով:

ՀՈՒՅՍՈՎ, ՈՐ «ԴՐՈՒԺԲԱ»-Ն ԿՀԱՂԹԻ

Գյումրեցիների պես «քաղցրալեզու» և ակտիվ ֆանտանները լռեցին աղետալի 1988-ից հետո: Դրանից ընդամենը 4 տարի առաջ շահագործման հանձնված «Դրուժբա» շատրվանի տարածքը ժամանակին քաղաքի ամենասիրված հատվածն էր, այսօր, սակայն, ամենաանմխիթարը:

ՀՀ քաղաքացու օրը՝ «Արթուր Թարխանյան» հիմնադրամի և Ռադիո Հայ ռադիոկայանի նախաձեռնությամբ և Ճարտարապետության և շինարարության

Հայաստանի ազգային համալսարանի Ուսանողական խորհրդի ու Պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ուսանողների մասնակցությամբ, Գյումրու Ֆանտաններ կոչվող թաղամասը մաքրվեց տարիներ շարունակ կուտակված աղբից: Նախաձեռնությանը միացան նաև բնակիչներից շատերը:

Մեր համալսարանի ուսանողները՝ որպես հայկական պատմամշակութային ժառանգության կրող ու պահպանող, չէին կարող անհաղորդ մնալ հայտնի հուշակոթողի տխուր ճակատագրին: Ավելին՝ նախաձեռնության հեղինակները համոզված են, որ շուտով կյանքի են կոչելու նաև հուշակոթողի վերականգնման և այն՝ իր երբեմնի հպարտ տեսքով գյումրեցիներին հանձնելու ծրագիրը:

ԱԺ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՀՅՈՒՐ

Ճարտաապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի շենքային պայմաններին և կրթական գործընթացին ծանոթանալու նպատակով, մայիսի 3-ին, համալսարան էին այցելել ՀՀ Ազգ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մխիթար Հայրապետյանը, տեղակալ Հովհաննես Հովհաննիսյանը և պատգամավոր Վահագն Թևոսյանը:

Պաշտոնատար անձինք՝ ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանի, ՃՇՀԱՀ-ի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Վլադ Ասատրյանի և պրոռեկտոր Եղիազար Վարդանյանի ուղեկցությամբ շրջեցին համալսարանում, ծանոթացան գործող լաբորատորիաների բացառիկ սարքավորումներին, դրանց կիրառման ոլորտներին, շփվեցին դիզայնի և քանդակի արվեստանոցում աշխատող ուսանողների հետ:

Մեր համալսարանի նկատմամբ հարգարժան հյուրերի հիացմունքն ու բուռն արձագանքն անթաքույց էր: Ինչպես նկատեց Մխիթար Հայրապետյանը՝ այստեղ յուրաքանչյուր դետալ մտածված է, յուրաքանչյուր քառակուսի՝ օգտագործված՝ ըստ պահանջի և անհրաժեշտության:

Այցն ամփոփվեց ռեկտորի աշխատասենյակում, որտեղ քննարկվեցին մոտ ապագայում իրականանալիք մի շարք հավակնոտ ծրագրեր:

ԼԻՏՎԱՑԻ ԿԱՆԱՅՔ ԿԻՍՎՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՓՈՐՁՈՎ ՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ

ԵՄ ԷՐԱԶՄՈՒՍ+ շարժունության ծրագրի շրջանակում՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էին Վիլնյուսի տեխնոլոգիայի

և դիզայնի քոլեջի պատվիրակությունը, որի կազմում են քոլեջի տնօրեն Նիյոլե Կիկուտիենեն, Շինարարության ֆակուլտետի դեկան Լինա Սակալաուսկիենեն, միջազգային հարցերով համակարգող Ինգա Պիշչիկիենեն և Երկաթգծային տրանսպորտի ֆակուլտետից՝ Պետրաս Վիլեյսիսը:

Հյուրընկալված պատվիրակության այցն արդեն բարեկամական էր, փոխադարձ այցերի շարքից, ինչպես ընդունելության ժամանակ նշեց ռեկտոր Գագիկ Գալստյանը: Վիլնյուսից ժամանած տիկնայք էլ խոստովանեցին, որ հայկական ջերմության և հյուրընկալության մասին բազմիցս են լսել, բայց այն տեսնելուց ու զգալուց հետո առավել զմայլված են: Ռեկտոր Գալստյանի և պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպմանը՝ հյուրերը, բացի հիացական խոսքերից, համալսարանին նաև գիրք նվիրեցին:

Մայիսի 13-17-ը նախատեսված այցելության ընթացքում՝ պատվիրակության անդամները հանդես եկան դասախոսությամբներկայացրին Վիլնյուսի տեխնոլոգիայի և դիզայնի քոլեջի կրթական ծրագրերը, հանդիպումներ ունեցան ՃՇՀԱՀ Շինարարության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ: Քննարկեցին երկու բուհերի միջև ուղիղ փոխանակումների հնարավորությունները, շինարարության ոլորտի ուսանողների անգլերենի բարելավմանն ուղղված խնդիրները, ինչպես նաև Վիլնյուսի տեխնոլոգիայի և դիզայնի քոլեջում 3-րդ կիսամյակում անգլերենով որոշ մոդուլների մատչելիությունը՝ ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրով ուսանողների փոխանակման վերաբերյալ:

ԲՈՐԴՈՅՈՒՄ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ

Ապրիլի 14-20-ը Ֆրանսիայի Բորդո քաղաքի ճարտարապետության և լանդշաֆտի բարձրագույն դպրոցում մեկնարկեցին REA 23-ի աշխատանքները, որոնց շրջանակում Ֆրանսիայի, Հայաստանի, Լեհաստանի, Սլովակիայի, Հունգարիայի ճարտարա-պետական մի շարք դպրոցների՝ թվով 9 թիմերի կողմից մշակվել և մասնագիտական հանձնաժողովի ու հանրության դատին էր հանձնվել Սովտեղ դե Գայեն քաղաքի պատմական միջուկի վերաարժևորման և կենսունակության բարձրացմանն ուղղված 9 նախագծերը: Հայաստանը ներկայացնող Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողներ Մելսիդա Բաբայանի և Սերլի Վարտաբեդյանի համատեղ նախագիծը մեծ հետաքրքրություն առաջացրեց ինչպես

մասնակիցների, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ու հասարակության շրջանում: Նախագիծը գբաղեցրեց 4-րդ հորիզոնականը:

Կազմակերպված գիտական կոնֆերանսում ելույթ ունեցան դասախոսներ Աշոտ Կանայանը՝ «Ճարտարապետի մտածելակերպի ձևավորման խնդիրները՝ կապված կայուն զարգացման ժամանակակից մարտահրավերների հետ» թեմայով և Նունե Պետրոսյանը՝ «Քաղաքային ժառանգության ինքնության պահպանության ինստիտուցիոնալ ասպեկտները՝ միջավայրի կայուն զարգացման ենթատեքստում» թեմայով:

ԴՐՎԵՑ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 1-ԻՆ «ՔԱՐԸ»

«Քարերը հայկական ճարտարապետության ժառանգության մեջ». թեմա, որը «Վոլքսվագեն» հիմնադրամի աջակցությամբ, դարձել է հիմք՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի, Գերմանիայի Գյոթինգեն քաղաքի Գեորգ Ավգուստի անվան համալսարանի 3 տարվա գիտագործնական հետազոտական ծրագրի համար:

Ապրիլի 23-ից մայիսի 12-ը՝ ծրագրի շրջանակներում, Գեորգ Ավգուստ համալսարանի գիտաշխատող Վանյա Վեդեքինդը և ՃՇՀԱՀ դոցենտ Էմմա Հարությունյանը՝ մասնագիտական լաբորատորիաների ղեկավարներ Մարինա Բունաթյանի, Արտավազդ Արզումանյանի, Նիկոլայ Չիլինգարյանի, ինչպես նաև

«Հորիզոն 95» ՍՊԸ շինարարական նյութերի փորձարկման լաբորատորիայի վարիչ Հասմիկ Գևորգյանի և մի խումբ ուսանողների մասնակցությամբ, Գեղարդի, Զվարթնոցի և Ավանի տաճարների որոշ քայքայված հատվածներում իրականացրեցին հետազոտական աշխատանքներ:

Մայիսի 13-ին մեր համալսարանում տեղի ունեցավ երեքշաբաթյա աշխատանքների ամփոփումը՝ քարերի քայքայված հատվածների և կապակցող շաղախի տարբեր հետազոտությունների ու լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք, ի դեպ, իրականացվել են ՃՇՀԱՀ-ի մասնագիտացված մասնագիտացված լաբորատորիաներում և հավաստագրերի հանձումը:

Ողջունելով ծրագրի մասնակիցներին և բոլոր ներկաներին՝ ռեկտոր Գագիկ Գալստյանը նշեց, որ նմանատիպ միջոցառումները ոչ միայն մեծացնում են հայկական ճարտարապետական ժառանգության նկատմամբ օտարազգիների հետաքրքրությունը, այլ նաև՝ նպաստում են առավել նեղ, մասնագիտական շրջանակներում արդյունավետ համագործակցությանը:

Նշենք, որ «Քարերը հայկական ճարտարապետության ժառանգության մեջ» ծրագրի նպատակն էր նպաստել վերականգնող ճարտարապետների և հարակից մասնագետների վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, ինչպես նաև մշակութային ժառանգության գործնական ամրակայման ու պահպանման աշխատանքների իրականացմանը՝ կանխելով քարերի քայքայումը և լուծելով պահպանության խնդիրները: Այս ծրագիրը հնարավորություն կտա հայ մասնագետներին նաև Գերմանիայում շարունակել հետազոտական աշխատանքները:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Եթե քաղաքը քոնն ես համարում, չես կարող անտարբեր մնալ այնտեղ կատարվող անցուդարձին: «Իմ քաղաքի խնդիրները՝ իմ աչքերով» խորագիրն էր կրում էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոնի նախաձեռնությամբ՝ «Քաղաքային տնտեսության էկոնոմիկա» առարկայի շրջանակներում կազմակերպված լուսանկարների ցուցահանդեսը:

Ցուցահանդեսին մասնակից ուսանողները շրջել, ուսումնասիրել և ամենայն խորությամբ վեր էին հանել քաղաքի տեսքին, քաղաքացիների առողջությանն ու հարմարավետությանը սպառնացող այնպիսի խնդիրներ, ինչպիսին են՝ երթևեկելի գոտիների խցանումը, կանգառների, աղբամանների վիճակը, շինարարական տեղամասերի անվերահսկելի փոշին, պատմամշակութային հուշարձանների պահպանումը, ստորգետնյա և վերգետնյա անցումների հարմարավետությունը:

Միջոցառմանը ներկա ռեկտոր Գագիկ Գալստյանը ողջունեց նախաձեռնության հեղինակներին և ուսանողներին՝ քաղաքի նկատմամբ այսչափ ուշադրություն և հոգատարություն ցուցաբերելու համար՝ նկատելով, որ քաղաքի խնդիրներով ապրելը մեզանից յուրաքանչյուրի պարտքն է:

Ավարտին՝ ցուցահանդեսի բոլոր մասնակից ուսանողները ստացան հավաստագրեր:

ԲԱՐԻ ԵՐԹ, ՍԻՐԵԼԻ՜ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

Կրկին մայիս է, կրկին փողոցներում փուչիկներով ու ծաղիկներով շրջանավարտների շքերթ է: Մայիսի 24-ին, Հանրապետության բոլոր ավագ դպրոցներում հնչում է Վերջին զանգը:

Մայիսի այդ առավոտը հաճելի խառնաշփոթ էր նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցում: 12-րդ դասարանն ավարտում էր 308 աշակերտ:

Տոնական միջոցառումը հագեցած էր երգ ու պարով, երախտապարտ հայացքներով, ապագայի նկատմամբ հույսով ու հավատով:

Հյուրերի շարքերում էին նաև ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը և 1-ին տեղակալ Եղիազար Վարդանյանը: Ռեկտորը շնորհավորեց շրջանավարտներին այս գեղեցիկ ու կարևոր օրվա առթիվ՝ մաղթելով բարի՛ երթ, հաջողություններով և ձեռքբերումներով լի կանաչ ճանապարհ:

ՎՍՏԱՀ ՔԱՅԼԵՐՈՎ ՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ՝ ԴԵՊԻ ԲԱՂՁԱԼԻ ԴԻՊԼՈՄԸ

Ուսանողական տարիները կյանքի լավագույն ժամանակահատվածն են, իսկ դիպլոմը՝ այն լավագույն պարգևը, որին արժանանում ես այդ տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում մայիսի 31-ին լարված եռուզեռ էր: Ամիսներ շարունակ գրքեր-տետրերով ու նախագծերով ծանրաբեռնված ուսանողները շտապում, քննարկում, նկարում, գրում ու ջնջում էին. պատրաստվում էին ավարտական աշխատանքների պաշտպանությանը:

Օրեր առաջ մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանողները հաջողությամբ անցել էին բոլոր դ փորձությունները: Մայիսի 31-ը բակալավրների ավարտական աշխատանքների պաշտպանության վերջին օրն էր:

Ամբողջացնելով համալսարանն ավարտող մագիստրանտներին և բակալավրներին՝ նշենք, որ Ճարտարապետության ֆակուլտետից ավարտական աշխատանքների պաշտպանության է մասնակցել 37 մագիստրանտ և 134 բակալավր, Շինարարության ֆակուլտետից՝ 22 մագիստրանտ և 104 բակալավր, Դիզայնի ֆակուլտետից՝ 15 մագիստրանտ և 147 բակալավր, Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետից՝ 4 մագիստրանտ և 75 բակալավր, Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետից՝ 19 մագիստրանտ և 160 բակալավր:

ՃՇՀԱՀ-Ի ՄՄԿ ՔՈԼԵՋԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Միջին մասնագիտական կրթության քոլեջի տնօրեն Անահիտ Հովհաննիսյանը՝ 3 ուսանողների մայիսի 26-31-ը Սանկտ Պետերբուրգում էին: Համագործակցության շրջանակներում իրականացրած այցի ընթացքում քոլեջի պատվիրակությունը եղել է Ս. Պետերբուրգի էկոնոմիկայի համալսարանում, Ճարտարապետության և շինարարության քոլեջում, Բիզնեսի և տեխնոլոգիայի քոլեջում, KNAUF-ի ուսումնական կենտրոնում:

Շրջելով կրթօջախներում՝ պատվիրակության անդամները ծանոթացել են դրանց ստեղծման պատմությանը, առկա մասնագիտություններին, լաբորատորիաների աշխատանքներին, մասնակցել դասապրոցեսների, կլոր սեղանների և քննարկումների:

Եվ, քանի որ առաջիկայում նախատեսված է քոլեջում ներդնել մաքուր շինարարություն մասնագիտությամբ փորձարարական ծրագիր, անհրաժեշտ գրականություն և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով, քոլեջի ներկայացուցիչներն այցելել են KNAUF-ի ուսումնական կենտրոն:

Այցի ընթացքում մեր պատվիրակության անդամները հանդիպել են նաև Սանկտ Պետերբուրգի էկոնոմիկայի համալսարանի հայ ուսանողների հետ, ինչպես նաև շրջել տեսարժան վայրերում:

ՆՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ, ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐ. ՃՇՀԱՀ-ՈՒՄ Է ՈՒԴԻՆԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և Իտալիայի Ուդինե համալսարանի միջև համագործակցությունը տարիների պատմություն ունի և առավել ընդլայնվելու, զարգանալու միտում:

Հունիսի 6-ին այդ համագործակցությունը տեղափոխվեց նոր հարթություն: Երկօրյա աշխատանքային այցով մեր համալսարան էին ժամանել Ուդինեի համալսարանի պատվիրակությունը, որի կազմում էին ռեկտոր, պրոֆեսոր Ալբերտո Ֆելիչե Դե Տոնին, միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ձիորջիո Ալբերտին, գիտական միջազգային գործունեության հարցերով պատասխանատու Աննա Ֆրանջիպանեն, պրոֆեսորներ Դիգրան Դիգրանյանն ու Մարիո Պեզետտան: Իտալական պատվիրակության անդամներն արժանացան ջերմ ու բարեկամական ընդունելության ռեկտորի և մեր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից և նշեցին, որ ուրախ են կրկին Հայաստանում գտնվելու համար: Իր հերթին՝ ռեկտոր Գալստյանն ընդգծեց, որ յուրաքանչյուր այց և կնքված համաձայնագիր առավել են ամրապնդում երկու համալսարանների միջև կապը:

Հյուրերը հակիրճ ներկայացրեցին իրենց համալսարանի կրթական գործունեությունը, համագործակցության շրջանակները և, առանձնահատուկ շեշտադրմամբ, մեր համալսարանի հետ համաձայնագրի առկայության փաստը:

Նվերների փոխանակումից հետո Ուդինեի համալսարանի պատվիրակները շրջայց կատարեցին համալսարանում, անթաքույց զարմանքով ու հիացմունքով ծանոթացան լաբորատորիաներին և ճարտարապետության ու դիզայնի արվեստանոցներին, որից հետո, էրազմուս+ ծրագրի շրջանակում՝ վավերացրեցին այդքան սպասված՝ «Ուսանողների փոխանակման մասին» համաձայնագիրը:

Համաձայնագրի առանցքում կրթության և հետազոտության ոլորտներում Ուդինեի համալսարանների շինարարության և ճարտարապետության ուսումնական պլաններով ուսումնառող ուսանողների և ՃՇՀԱՀ-ի ուսանողների փոխանակման ծրագրի իրականացումն է:

ԵԹԵ ՄԵՐ ՇԵՆՔԵՐԸ ՆԱԽԱԳԾԵԻՆ ՖՐԱՆՍՈՒՀԻՆԵՐԸ...

Ինչպիսի՞ն է Երևանյան ճարտարապետությունը ֆրանսիացի ուսանողների աչքերով, ի՞նչ կուզենային տեսնել ներկայիս բնակելի շենքերի փոխարեն և ի՞նչ են առաջարկում:

Այս դիտարկումները ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհիներ Ժուլիետ Վիերուշևսկիի և Մարի Մուժինոյի նախագծի թեմայի առանցքում էին: Լիոնի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի և ՃՇՀԱՀ-ի միջև համագործակցության շրջանակում մեր համալսարանում սովորող ուսանողներին հետաքրքրել էին Երևանի 3-րդ մասում տեղակայված բնակելի շենքերը:

Նախագծի ղեկավար Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի ասիստենտ Արև Սամուելյանի ուղղորդմամբ, ֆրանսուհիներն ուսումնասիրել էին տեղանքը և վերանախագծել այն՝ ըստ իրենց մտածելակերպի և պատկերացումների, որոնք նախատեսում են շենքերի միանման ֆասադներ, մշակութային և առևտրային կենտրոններ, ստորգետնյա կայանատեղիներ: Նախագծի պաշտպանությունն ընթացավ շատ բուռն՝ համեմված տարատեսակ կարծիքներով ու դիտողություններով:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՑԱՆՔ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՄԻՇԵԼ ՄՈՍԵՍՅԱՆԻՆ

«Իմ ասածն ընդունեք՝ իբրև երաժշտություն, որովհետև ճարտարապետությունը ձայների, ռիթմի հարմոնիա է, միայն զգալով է հնարավոր հասկանալ տեսածը»:

Այսպես սկսեց իր դասախոսությունը մեր համալսարանում հյուրընկալված ֆրանսահայ աշխարհահռչակ ճարտարապետ, Բրիտանական ճարտարապետական թագավորական ինստիտուտի անդամ, Հարվարդի, Չիկագոյի և Փենսիլվանիայի համալսարանների դասախոս, աստղագետ Միշել Մոսեսյանը:

Բազմաթիվ միջազգային հեղինակավոր մրցույթների դափնեկիր Միշել Մոսեսյանը ծնվել է Փարիզում, մասնագիտական կրթություն ստացել Փարիզի Գեղեցիկ արվեստների Ազգային դպրոցում, իսկ ճարտարապետության մագիստրոսի կոչում՝ Հարվարդի համալսարանում: Հայազգի նշանավոր ճարտարապետի հիմնած «Մոսեսյան և գործընկերներ» նախագծային ընկերությունը հեղինակ է աշխարհում հայտնի բազմաթիվ նախագծերի, այդ թվում՝ Քաթարում Դոհա հին քաղաքի կենտրոն տարածքի վերանորոգման նախագիծը, Բրյուսելում ՆԱՏՕ-ի նոր մասնաշենքի և հարող տարածքի նախագիծը: Միշել Մոսեսյանի ընկերության հատկանշական և, թերևս, ամենափառահեղ գործերից է Սաուդյան Արաբիայի Մեքքա քաղաքի Մուսուլմանական թանգարանի նախագիծը: Այստեղ է, որ դասախոսությանը ներկա Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանը հիշեց մի դրվագ, երբ Ստամբուլում, մատնացույց անելով մզկիթ կառուցած հայ ճարտարապետի, հարց են ուղղել քաղաքապետին, թե ինչու է թույլ տվել, որպեսզի այն հայը կառուցի: Քաղաքապետը պատասխանել է, որ եթե Ստամբուլից ջնջենք հայ ճարտարապետների գործերը, ցույց տալու շատ քիչ բան կունենանք: Այս պատմությունը պարոն Թովմասյանը պատահական չհիշեց. Վարպետության դասին ներկա ուսանողներից շատերի հայացքում էր այդ հարցը գրվել, թե ինչու է հայ ճարտարապետը մահմեդական կառույց հեղինակում:

«Ճարտարապետությունն ազգություն չունի, ինչպես և երաժշտությունը»,- բացատրեց Միշել Մոսեսյանը՝ իր և աշխարհի հայտնի ճարտարապետական հորինվածքների օրինակով ուսանողների համար բացահայտելով ճիշտ ձև ու բովանդակություն ստանալու նրբությունները: